ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Շահգալդյան,

Հաշվի առնելով ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Է. Աղաջանյանի, ՀՀ տարածքային կառավարման նախարար Ս. Պապիկյանի 2020թ. Հոկտեմբերի 30-ի հանձնարարականը և ՀՀ Կոտայքի մարզպետի պարտականությունները կատարող Ա. Ավետիսյանի գրությունը՝ անհրաժեշտություն է առաջացել համայնքապետարանի աշխատակազմում ավելացնել համայնքի ղեկավարի ևս մեկ տեղակալի հաստիք, որը զբաղեցնող անձը, ունենալով համապատասխան զինվորական կրթություն, կոչում կամ աշխատանքային փորձ, կհամակարգի զորահավաքի, զորակոչի, զինկոմիսարիատի հետ տարվող աշխատանքները, պատերազմական իրավիճակում կղեկավարի համայնքի աշխարհազորը և կամավորականության կայացումը, մասնագիտորեն կիրականացնի «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքով ՏԻՄ-ին վերապահված լիազորությունները և գործառույթները:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՍՏԱՑՎԱԾ է« 04 » 11 2020 թ.
Մուտք N 4873 Թղթ N 04